# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱԶՅԱՆՑ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 29 | Զաբոտա Դեզ Պյուս | Զաբոտա Դեզ Պյուս | ԶԱԲՈՏԱԴԵԶ | Ախտահանիչ խտանյութ ՝ մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի և այլ պարագաների ախտահանման և մաքրման համար, ինչպես նաև նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար: Բաղադրությունը – ՉԱՄ, գուանիդինի ածանցյալներ, տրիամիններ, ֆերմենտներ (ամիլազա, պրոտեազա, լիպազա), ինչպես նաև ոչ իոնոգեն ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), կոռոզիայի ինհիբիտորներ, բուրանյութ (ընտրողաբար) և այլ ֆունկցիոնալ հավելումներ, ջուր: Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտրանոց տարաներով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 1լիտր խտանյութից պատրաստվում է մինչև 0,4%-անոց 250 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ աղիքային վարակները՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, ներհիվանդանոցային վարակների հարուցիչները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա, հատուկ վտանգավոր վարակները՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, սիբիրյան խոցի և այլ, անաէրոբ վարակները, լեգիոնելոզի հարուցիչները և տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները, կորոնավիրուսները, այդ թվում SARS-CoV-2, ադենովիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտների, այդ թվում՝ Ա, Բ, Ց, Ե հեպատիտի, պոլիոմիելիտի, ՄԻԱՎ վիրուսները, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսները, այդ թվում՝ «թռչնի» H1N1 և «խոզի» H5N1, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսները, հերպեսի, ցիտոմեգալովիրուսային վարակի և այլ վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի ախտածին սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Aspergillus niger-ի վրա) նկատմամբ, սպորոցիդ ակտիվությամբ (թեստավորված Bacillus cereus-ի և Bacillus subtilis-ի վրա): Միջոցն օժտված է օվոցիդ հատկությամբ մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստերի և օոցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | նկատմամբ: Միջոցն օժտված է ապաբաղարկիչ ակտիվությամբ ՌՆԹ/ԴՆԹ ամպլիկոններով բաղարկված օբյեկտների նկատմամբ ազդեցությունը մինչև 15 րոպեում : Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ՝ առնվազն 24 ժամ: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է առնվազն 18°C : Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 50 օր է, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ նյութի pH - 8,0: Վտանգավորության աստիճանը - 3-րդ, 4-րդ դաս:: Կիրառումը սրբելու, ցողելու եւ թրջելու եղանակով:: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական , ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ ընդհանուր պիտանելության ժամկետի առնվազն՝ ½ : |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 29 | | | | |